Այսօր դեռևս շարունակում է արդիական մնալ կրծքագեղծի կլինիկական հետազոտության իրականացման և դրա արդյունքների մեկնաբանման հմտության հարցը, հատկապես այն դեպքերում, երբ մամոգրաֆիկ քննությամբ հայտնաբերված է որոշակի ախտահարում: Կրծքագեղծի քաղցկեղի հայտնաբերման բացթողումների հիմնական պատճառներն այն իրավիճակներն են, երբ երիտասարդ կնոջ մոտ կլինիկական հետազոտությամբ կամ ինքնազննմամբ որոշակի խնդիր է հայտնաբերվում, սակայն մամոգրաֆիկ քննությամբ այն ժխտվում է: Տարբեր երկրներում, ներառյալ ԱՄՆ և Կանադա, բժիշկների շրջանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ առկա է ԿԿՅ հմտությունների բարելավման անհրաժեշտությունը [2]:

Դեռևս գոյություն ունի մեծ բազմազանություն ԿԿՅ-ի ձեռնարկման ամենաճիշտ ժամկետների, կրծքագեղծի քաղցկեղի վտանգի գործոնների, ԿԿՅ-ի անցկացման հաճախականության և դրա ցուցումների համար համապատասխան տերմինաբանությունն ձևավորելու առումով: Օրինակ, Քաղցկեղի ամերիկյան ասոցիացիայի 2003թ. առաջարկներով ԿԿՅ-ն պետք է կնոջ կանոնավոր ֆիզիկական քննության բաղկացուցիչ մասը լինի. 20-30 տարեկան կանանց խորհուրդ է տրվում այն կատարել առնվազն 3 տարին մեկ անգամ, իսկ 40 տարեկան և բարձր, ամախտանիշ կանանց՝ յուրաքանչյուր տարի: Ամերիկյան բժշկական ասոցիացիան առաջարկում է 40-ից 49 տարեկան կանանց շրջանում ԿԿՅ իրականացնել յուրաքանչյուր 1 կամ 2 տարին մեկ անգամ, իսկ 50 տարեկանից հետո՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ [2]:

**Վերլուծության մեթոդաբանությունը**

Մամոգրաֆիայի և կրծքագեղծի կլինիկական հետազոտության արդյունավետությունը համեմատելու, ինչպես նաև կրծքագեղծի քաղցկեղից մահացության մեջ չշոշափվող (ոչ-պալպացիոն) ուռուցքների հայտնաբերման դերը պարզելու համար աշխարհում իրականացվել են մի շարք հետազոտություններ: Մեր ներկա վերլուծությունը նպատակ ունի՝

- 1. ամբողջացնել արդի բժշկական գիտական գրականության մեջ կուտակված վերջին տվյալները, պարզել, թե որն է ԿԿՅ դերը կրծքագեղծի քաղցկեղով հիվանդացության և մահացության նվազեցման գործում,

2. ներկայացնել բժշկական գիտական աշխարհում առկա վերջին համեմարարականները ԿԿՅ վերաբերյալ, այդ թվում դրա ճիշտ իրականացման տեխնիկայի և հաղորդագրման մասին:

Ուստի, վերլուծվել են ստորև նշված լայնածավալ 3 հետազոտության արդյունքները, ինչպես նաև ԱՄՆ-ում հատուկ մասնագիտացված խորհրդի կողմից 2002թ. ներկայացված առաջարկությունները, մասնավորապես՝

- 1. Անգլիայի առողջապահության ազգային ծառայությունների (NHS<sup>1</sup>) կրծքագեղծի քաղցկեղի հետազոտման ծրագիրը

Նպատակը՝ համեմատել մամոգրաֆիայի և ԿԿՅ արդյունավետությունը 50-ից 64 տարեկան 1 միլիոն կանանց շրջանում:

- 2. ԱՄՆ կրծքագեղծի քաղցկեղի հայտնաբերման ցուցադրական ծրագիրը (BCDDP<sup>2</sup>)

- 3. Կրծքագեղծի քաղցկեղի կանադական ազգային հետազոտությունը (CNBSS II<sup>3</sup>)

Ներկայումս այս հետազոտությունը համարվում է միակը, որը փորձել է պարզել կրծքագեղծի չշոշափվող ուռուցքների հայտնաբերման դերը կրծքագեղծի քաղցկեղից մահացության մեջ: Կանադական հետազոտության մեջ 50-59 տարեկան կանայք պատահական սկզբունքով տեղաբաշխվել են կամ ԿԿՅ և մամոգրաֆիայի, կամ էլ միայն ԿԿՅ խմբի մեջ: Կլինիկական հետազոտությունն իրականացվել է վերապատրաստված բուժքրոջ կողմից, որի կատարողականը նույնքան բարձր է (եթե ոչ ավելի բարձր), որքան մասնագետ-վիրաբույժինը:

- 4. ԱՄՆ մասնագիտացված խորհրդի 2002թ. առաջարկությունները ԿԿՅ դերի մասին

Քաղցկեղի ամերիկյան ասոցիացիան Հիվանդությունների վերահսկման կենտրոնի (CDC<sup>4</sup>) հետ համատեղ ձեռնարկեց մի գործընթաց, որի արդյունքում պետք է մշակվեին առաջարկներ ԿԿՅ իրականացնելու և հաշվետվությունների որակը բարելավելու համար: Հիմնական նպատակն էր առկա գրականության ու մասնագիտական կուտակված փորձի հիման վրա չափորոշիչների մշակումը:

Աշխատանքները կազմակերպելու համար 2002թ. ԱՄՆ-ում ստեղծվեց մասնագիտական խորհուրդ (կոմիտե)՝ կազմված ամերիկացի և միջազգային փորձագետներից: Խորհրդի առջև նպատակ էր դրվել բժիշկների և առողջապահական կազմակերպությունների համար մշակել առաջարկություններ

<sup>1</sup> NHS - National Health Service  
<sup>2</sup> BCDDP - Breast Cancer Demonstration Project  
<sup>3</sup> CNBSS II - Canadian National Breast Screening Study II  
<sup>4</sup> CDC - Center for Disease Control

ԿԿՅ իրականացման և որակյալ հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ: Մասնագիտական խորհուրդը աշխատանքային հանդիպումների արդյունքում պատրաստեց մի զեկույց, որը մի քանի վերանայումից հետո ամփոփվեց և ամբողջացվեց:

Ելնելով ԿԿՅ-ի վերաբերյալ առկա քննարկումներից և վերջինիս ունեցած դերի մասին գիտական աշխարհի ձեռք բերած տվյալներից, մենք նպատակահարմար ենք գտնում սույն վերլուծության մեջ ընդգրկել նաև աշխատանքային խմբի կողմից պատրաստված զեկույցի հիմնական առաջարկները, որոնք վերաբերում են՝

- կրծքագեղծի կլինիկական հետազոտության իրականացման որակին,
- արդյունքների հաղորդագրման/հաշվետվության հիմնահարցերին:

Քանզի դեռևս սահմանափակ են տվյալներն առ այն, թե որքանով է ԿԿՅ-ն նպաստում կրծքագեղծի քաղցկեղի վաղ հայտնաբերմանն ու մահացության ցուցանիշների իջեցմանը, ինչպես նաև՝ թե որոնք են ԿԿՅ-ի ճիշտ իրականացման վրա ազդող գործոնները, առաջարկների մեծ մասը հիմնվում է կուտակված կլինիկական փորձագիտության և գործնական փորձի վրա:

Որքան էլ հետաքրքիր է, բայց առաջարկությունների մի մասը կոչ է՝ որոշակի հարցերի շուրջ հետազոտ հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ, որոնք կարող են ավելի ամուր հիմք ստեղծել կանանց առողջության և խնամքի մեջ ԿԿՅ-ի վերաբերյալ կայացվելիք որոշումների համար:

**Վերլուծության արդյունքները**

**1. NHS հետազոտության արդյունքները**

NHS հետազոտությամբ հայտնաբերվել է կրծքագեղծի քաղցկեղի մոտ 5000 դեպք, որոնցից 60%-ը եղել է >1սմ տրամագծով ինվազիվ քաղցկեղ: Նույնքան դեպքեր կարող էին հայտնաբերվել նաև ԿԿՅ ժամանակ: Մամոգրաֆիայի արդյունքում հայտնաբերված քաղցկեղների 18%-ը կրծքագեղծի in situ քաղցկեղներ էին, որոնք հնարավոր չէր լինի հայտնաբերել կրծքագեղծի կլինիկական հետազոտությամբ, այսպիսով՝ նվազեցնելով նաև մամոգրաֆիկ հետազոտության արդյունքում գերախտորոշման հավանականությունը: Մամոգրաֆիայով հայտնաբերված <1սմ տրամագծով ինվազիվ քաղցկեղի դեպքերի միայն 22%-ը կարող էր բաց թողնվել ԿԿՅ-ով: Հետևաբար, մամոգրաֆիայի ցանկացած առավելություն ԿԿՅ-ի նկատմամբ պետք է քննարկվի <1սմ տրամագծով ինվազիվ քաղցկեղի այս 22% դեպքերի հաշվարկով, ինչպես նաև ծորանային in situ քաղցկեղների անորոշ թվով դեպքերի առումով, որոնք չախտորոշելու պարագայում կարող են վերածվել ինվազիվ քաղցկեղի [4]:



2. Այս հետազոտության մեծագույն առավելություններից մեկն այն է, որ իրականացման ամբողջ 10 տարվա ընթացքում այն կրծքագեղձի քաղցկեղի վերաբերյալ մարդկանց իրազեկվածությունը բարձրացրեց այն աստիճանի, որ նույնիսկ սկրինինգային մամոգրաֆիաների ժամանակ բնակչության որոշակի հատվածում քաղցկեղի չհայտնաբերված դեպքերը բացահայտվում են հենց հիվանդների կողմից պարբերական ինքնազննումների շնորհիվ: NHS հետազոտության դրական կողմերից մեկն էլ այն է, որ հանրությունը կրծքագեղձի քաղցկեղի սկրինինգային ծրագրերը սկսեց ընկալել որպես «քաղցկեղի վաղ հայտնաբերման» գործընթաց:

**ԱՄՆ BCDDP ծրագրի արդյունքները**

Կրծքագեղձի <1սմ տրամագծով քաղցկեղի դեպքերի 39%-ը հայտնաբերվել է ԿԿՅ-ով:

**3. Կանադայի CNBSS II հետազոտության արդյունքները**

13 տարի անց իրականացված հսկողական հետազոտությունները պարզեցին, որ միայն մամոգրաֆիայի ենթարկված կանանց խմբում մահացության ցուցանիշներն ավելի բարվոք չէին, քան մյուս խմբի կանանց մահացության ցուցանիշները:

Այսպիսով, այս հետազոտությունը ցույց տվեց, որ ներկայումս չկան հավաստի ապացույցներ առ այն, որ մամոգրաֆիկ հետազոտությամբ ոչ պալպացիոն/չշոշափվող ուռուցքի հայտնաբերումը նպաստում է կրծքագեղձի քաղցկեղից մահացության իջեցմանը:

Բացի այդ, կանադական այս հետազոտությունն ի դերն հանեց նաև մամոգրաֆիկ հետազոտության առաջացրած որոշ անցանկալի հետևանքներ. կոմբինացված սկրինինգի խմբում բարորակ ուռուցքների բիոպսիաների հաճախականությունը 3 անգամ բարձր էր միայն ԿԿՅ կատարված խմբի համեմատ:

**4. ԱՄՆ մասնագիտական խորհրդի առաջարկությունները**

Մասնագիտական խորհուրդը փաստել է, որ մամոգրաֆիան և ԿԿՅ չեն կարող փոխարինել մեկը մյուսին: Մասնագիտական խորհրդի առաջարկություններն ուղղված են՝

- 1. կրծքագեղձի բուն կլինիկական հետազոտությանը,
- 2. կատարողականի արգելքների հաղթահարմանը:

**Կրծքագեղձի բուն կլինիկական հետազոտությանն ուղղված առաջարկներ**

ա. Մշակել չափորոշիչներ ԿԿՅ համար՝ ներառելով հետևյալ կարևորագույն կետերը. հիվանդության

կլինիկական պատմությունը, տեսողական (վիզուալ) քննությունը և պալպացիան (շոշափումը): Բ. Խրախուսել ԿԿՅ-ի վերաբերյալ մշակված չափորոշիչների տարածումը:

**1. Կրծքագեղձի բուն կլինիկական հետազոտությունը**

**Չիվանդության կլինիկական պատմությունը**

Կլինիկական պատմությունը, որը բնորոշում է պացիենտի անհատական և ընտանեկան պատմությունը, շատ կարևոր է կրծքագեղձի քաղցկեղի ռիսկը գնահատելու համար:


**Տեսողական (վիզուալ) գնահատում**

Կրծքագեղձի գնումը կատարելուց առաջ անհրաժեշտ է պացիենտին իրազեկել: Նա պետք է նստի ձեռքերն ազդրերին սեղմած: Այս դիրքը ընդունելու ժամանակ մեծ կրծքանկանները կծկվում են, և դրանով իսկ դյուրին է դառնում անհամաչափությունների ու մաշկային փոփոխությունների հայտնաբերումը:

**Պալպացիա**

Տեսողական հետազոտումից հետո անհրաժեշտ է շոշափել յուրաքանչյուր կուրծքը և հարակից լիմֆատիկ հանգույցները:

**Դիրքը.** Անութային, վերանրակային և ստորանրակային լիմֆատիկ հանգույցները շոշափելու համար պացիենտը պետք է նստի: Կրծքագեղձի պալպացիայի համար պացիենտը պետք է պառկի՝ նույն կողմի ձեռքը դնելով գլխի տակ, որպեսզի դրանով իսկ կրծքավանդակի պատի վրա հարթեցնի կրծքագեղձի հյուսվածքը, այսպիսով նաև պակասեցնելով շոշափվող կրծքագեղձի հյուսվածքի հաստությունը: Կրծքավանդակի պատի վրա հետազոտվող հյուսվածքը պետք է հնարավորինս բարակ լինի: Հետազոտողը պետք է զննվող ողջ տեղամասը տեսնի:



Նկար 1. Պացիենտի դիրքը և պալպացիայի ուղղությունը ԿԿՅ-ի ժամանակ


Նկար 1\*-ում ցույց են տրված կրծքագեղձի լատերալ և մեդիալ հատվածները: Սլաքներով պատկերված է ուղղահայաց գծերի մեթոդով իրականացված հետազոտությունը:

**Շրջագիծը.** Հետազոտման համար պետք է ընտրել հետևյալ եզրագիծը. ներքև՝ միջին անութային գծով, ստորկրծքային աղեղով՝ մինչև հինգերորդ-վեցերորդ կողը, վեր՝ դեպի կրծոսկրի կողմնային եզրը, և ետ՝ դեպի միջին անութային գիծը:

**Որոնման ձևը.** Կրծքագեղձի ամբողջ հյուսվածքը պետք է հետազոտվի՝ «ուղղահայաց ժապավենի» եղանակով (Նկար 1): Ի դեպ, համակարգված վերլուծությունները ցույց են տվել, որ այս եղանակը նկատելի առավելություններ ունի «կոնցենտրիկ շրջանների» կամ «ճառագայթաձև շյուղի» եղանակների նկատմամբ՝ ելնելով իր ավելի համապարփակ ընդգրկման տեղամասից: Հետազոտությունը պետք է սկսել անութայինից:

**Շոշափումը**

Հետազոտողը պետք է օգտագործի միջին երեք մատների բարձիկները՝ ամեն անգամ մեկ կրծքագեղձը շոշափելու նպատակով (Նկար 2): Պտուկի վրա և դրա տակ գտնվող հյուսվածքը պետք է շոշափել, ոչ թե ճգմել: Ճգմունը հաճախ կարող է հանգեցնել պտուկից արտադրության, ինչպես նաև անհարմարավետության զգացումի: Ցուցամատի, երրորդ և չորրորդ մատների բարձիկները կատարում են փոքր շրջանաձև շարժումներ, կարծես շոշափում են մետաղադրամի եզրը:




Նկար 2. Պալպացիայի տեխնիկան

Կրծքագեղձի վերին դրսային քառորդականում և պտուկի ու հարպտկային շրջանի տակ գտնվող հյուսվածքը պետք է մանրակրկիտ հետազոտել, քանզի դրանք են քաղցկեղի առաջացման հիմնական երկու հատվածը:

\*Նկարները վերատպվում են հղվող աղբյուրի (2) թույլտվությամբ:

**Ճնշումը/սեղմումը**

Քանզի հետազոտվում է հյուսվածքի յուրաքանչյուր հատված, կրծքագեղձի վրա ճնշումը պետք է գործադրել հաջորդականությամբ՝ թեթև, միջին և խորը, համապատասխանաբար ենթամաշկային, միջին մակարդակի և ներքև, դեպի կրծքավանդակի պատը ուղղություններով (Նկար 3): Հետազոտողը պետք է մատների բարձիկներով կատարի երեք շրջան՝ յուրաքանչյուրի ժամանակ աստիճանաբար մեծացնելով հյուսվածքի վրա գործադրվող ճնշման աստիճանը (ենթամաշկային, միջին գծով և ներքև՝ դեպի կրծքավանդակի պատը):



Նկար 3. Կրծքագեղձի հյուսվածքի պալպացիայի ժամանակ կիրառվող ճնշման մակարդակները աջ կրծքագեղձի միջաձիգ կտրվածքում

**2. Արդյունքների մեկնաբանությունն ու գրանցումը**

ա. Հաշվետվության մեջ պետք է արձանագրվեն պացիենտի հիվանդության պատմության տվյալները, ինչպես նաև ԿԿՅ-ի արդյունքները՝ որպես կամ նորմալ/բացասական, կամ ոչ նորմալ/ախտաբանական:

Կրծքագեղձի կլինիկական հետազոտությունն ինքնին չի կարող հստակ տարբերակել բարորակ ուռուցքը չարորակից: ԿԿՅ-ի վիզուալ (տեսողական) և շոշափման դիտարկումների արդյունքների մեկնաբանումը դյուրին խնդիր չէ, քանի որ պացիենտին առնչվող մի շարք գործոններ կարող են անդրադառնալ դրանց վրա. օրինակ՝ տարիքը,



ծննդաբերությունների թիվը, հյուսվածքի խտությունը ու համազգացվողությունը և այլն: ԿԿՅ-ի արդյունքների մեկնաբանման տերմինաբանության միօրինակացումը կարող է նպաստել կրծքագեղձի կլինիկական հետազոտության իրականացման առավել ճշգրտմանն ու հետևողականությանը:

Ընդհանուր առմամբ, ԿԿՅ-ի արդյունքները պետք է մեկնաբանել 2 եղանակով՝

- o **Նորմալ/բացասական.** զննման ժամանակ չի հայտնաբերվել որևէ ախտահարում կամ կասկածելի գոյացություն,
- o **ոչ նորմալ.** կրծքագեղձերում անհամաչափություններ՝ զննման կամ էլ շոշափման ժամանակ, որոնք վկայում են հետագա հետազոտությունների կամ էլ՝ ուղեգրումների անհրաժեշտության մասին:

**3. Հետագա հսկողությունը**

ԿԿՅ-ի կարևոր բաղադրիչներից է հետագա հսկողությունը

**o Նորմալ/բացասական ԿԿՅ-ի դեպքում**

ԿԿՅ-ի բացասական արդյունքի դեպքում հետագա ճիշտ հսկողությունը ներառում է՝

- կրկնակի ԿԿՅ հաջորդ սկրինինգային ժամանակահատվածում կամ
- կանխարգելիչ առողջական հետազոտություն:

**o ոչ նորմալ ԿԿՅ-ի դեպքում.**

- բուժաշխատողը չպետք է անտեսի ոչ նորմալ արդյունքով ԿԿՅ-ն, եթե նույնիսկ մամոգրաֆիայով կամ կրծքագեղձի հետազոտության այլ մեթոդով ստացվել է բացասական արդյունք,
- բուժաշխատողը պետք է հսկի և համապատասխան վարույթ ուղարկի հետազոտության բոլոր վիճահարույց կամ ախտաբանական արդյունքները, մինչև համապատասխան բավարար լուծում ստանալը, ձեռնարկելով ստորև նշված գործողություններից որևէ մեկը,
- բոլոր ուղեգրումների դեպքում պետք է հավաստիանալ, որ ԿԿՅ-ի արդյունքների հաղորդման/ախտորոշման թերթիկի մեկ օրինակը ուղարկվում է այն մասնագետին, որը պետք է իրականացնի հետագա հսկողական հետազոտություններ, դրանք են՝

- կրկնակի ԿԿՅ,
- հավանական բարորակ գոյացության բուժում,
- ուղեգրում կրծքագեղձի մասնագետի մոտ,
- կրծքագեղձի գործիքային հետազոտում

(ուլտրաձայնային քննություն, մամոգրաֆիա, մագնիսառեզոնանսային շերտանկարում),

- ասպիրացիա,
- բիոպսիա (մաշկի միջով կամ հատումով/էքս-ցիզիոն):

**Հսկողական այցերի կազմակերպման ժամանակացույցը**

- ԿԿՅ-ի նորմալ արդյունքներով 40 և բարձր տարիքի կանանց մոտ՝ կրկնակի,
- ԿԿՅ-ն կարելի է իրականացնել որպես կնոջ կանոնավոր առողջական հետազոտության մի մաս,
- ԿԿՅ-ի նորմալ արդյունքներով 40-ից ցածր տարիքի կանանց մոտ այս ժամանակահատվածը կարող է ավելի երկար լինել,
- Ախտաբանական արդյունքների դեպքում հետագա հսկողությունը պետք է իրականացնել առաջիկա 6 ամսվա ընթացքում:

**Համագործակցություն**

Եթե անհրաժեշտ է հետագա հսկողություն, ապա հետազոտողը պետք է համագործակցի այլ բժիշկների հետ, այդ թվում՝ ռադիոլոգի, օնկոլոգի, վիրաբույժի և կրծքագեղձի խնդիրներով զբաղվող այլ մասնագետների հետ:

**Հսկում համոզվելու համար, որ ուղեգրումն իրականացվել է**

Անհրաժեշտ է իրականացնել հսկում, որպեսզի հավաստիանալ, որ հիվանդն այցելել է ուղեգրվող բուժհաստատություն: Այս առումով կարելի է պահել համապատասխան փաստաթղթեր, հիշեցումներ, ունենալ պացիենտներին ետ կանչելու և հիշեցումների համակարգ և իրականացնել միջոցառումներ՝ հիվանդից համապատասխան արձագանք ստանալու ակնկալիքով:

**II. ԿԿՅ-ի կատարողականի արգելքների հաղթահարումը**

Հստակ և ճիշտ ԿԿՅ իրականացնելու համար կոմիտեն առաջարկել է աշխատել հետևյալ ուղղություններով՝

**ա. Կրծքագեղձի կլինիկական հետազոտություն իրականացնող բուժաշխատողի վերապատրաստում**

- Վերապատրաստման դասընթացները պետք է կառուցվեն առկա կրթական ծրագրերի հիման վրա և ընդգրկեն հետևյալ բաղադրիչները՝
- դիդակտիկ նյութեր,
- ցուցադրման նյութեր՝ տեսաժապավենով կամ

ցուցադրմամբ, ԿԿՅ-ի իրականացումը տեսնելու համար,

-գործնական ուսուցում ու մասնագիտական աջակցում:

Մասնակիցները պետք է փորձ ձեռք բերեն և հմտանան ԿԿՅ-ի իրականացման գործում՝ օգտագործելով անատոմիական մանեկեններ, անմիջական հետադարձ կապ ունենալով դասավանդողի հետ:

**բ. Հանրային կրթություն**

Կոմիտեն առաջարկել է խրախուսել և աջակցել ԿԿՅ-ի վերաբերյալ հանրային կրթությանը, որպեսզի կանայք՝

- իմանան, թե ինչ է պետք սպասել ԿԿՅ-ից և հետագա հսկողական այցերից,
- հասկանան ԿԿՅ-ի առավելությունները, թերությունները և դրանից բխող հնարավոր վտանգները,
- ծանոթանան իրենց իսկ կրծքերի առանձնահատկություններին, ինչպես նաև այն գործընթացների հետ, որոնց միջոցով կարելի է հայտնաբերել կրծքագեղձի ախտահարումները:

**գ. Գիտահետազոտական աշխատանք և որակի բարելավում**

Կոմիտեն առաջարկել է նաև աջակցել և խրախուսել ԿԿՅ-ի կարևորագույն ոլորտներում իրականացվող աշխատանքները, հատկապես հետևյալ հարցերի շուրջ՝

-ԿԿՅ-ի զգայունության և սպեցիֆիկության նախնական հայտնաբերման մեթոդների, հայտնաբերված գոյացությունների բնութագրերի և ԿԿՅ-ի իրականացման ճիշտ ժամանակի վերաբերյալ:

**Եզրակացություն**

Իդեալական կլինի, եթե ախտորոշումը սկրինինգի միջոցով հասցվի այն մակարդակին, որ առավել նվազ ծախսերով և մարդկային ռեսուրսներով հնարավոր լինի հասնել շոշափելի ու առավել մեծ արդյունքների, ու մեծ հավանականությամբ նաև նվազեցվի մահացությունը. կարծում ենք, որ կրծքագեղձի կլինիկական հետազոտությունն իր մեջ ունի այսօրինակ մեծ ներուժ:

Հասարակության մեջ ընդհանուր իրազեկության բարձրացումը NHS հետազոտությամբ իջեցրեց կրծքագեղձի քաղցկեղի չհայտնաբերված, բարձիթողի դեպքերի թիվը: ԿԿՅ ավելի լայնածավալ կիրառումը կնվազեցնի անախտանիշ, ոչ ինվազիվ քաղցկեղների անհարկի հայտնաբերումը, այսպիսով պակասեցնելով հաճախ անտեղի, թանկարժեք, ոչ արդյունավետ սկրինինգային հետազոտություն-

ների թիվը, և ուշադրությունը կկենտրոնացնի լուծման օպտիմալ տարբերակների վրա [3]:

ԿԿՅ-ն կարող է որոշակի ներդրում ունենալ բուժաշխատողների և կանանց կողմից կրծքագեղձի քաղցկեղի որոշ տեսակների հայտնաբերման գործում, այն կարևոր դեր ունի հետագա հսկողական խնամքը կազմակերպելու համար: Առաջարկները, որոնք բերվել են վերոհիշյալ մասնագիտական խորհրդի կողմից, բժշկական աշխարհում կրծքագեղձի կլինիկական հետազոտության դերի շուրջ ձևավորվող փոփոխությունների շարքում առաջին քայլերից են, և ցանկալի է, որ ավելի շատ կազմակերպություններ ներգրավված լինեն նմանօրինակ գործընթացներում: Մանրակրկիտ ալգորիթմներ ու միջամտություններ առաջարկելու փոխարեն, մասնագիտական խորհուրդը ներկայացրեց ընդհանուր կարգի առաջարկությունների փաթեթ, որոնք իրենց մեջ ընդգրկում են մի շարք կարևոր թեմաներ և սկզբունքներ: Այս առաջարկություններն ամուր հիմք են կլինիկական պրակտիկայի, մասնագիտական վերապատրաստման, հանրային կրթության և գիտահետազոտական աշխատանքների հետագա իրականացման համար:

**Գրականություն**

1. Kusters PJ, Gotsche PC, Regular self-examination or clinical examination for early detection of breast cancer, Cochrane Database of Systemic Reviews, 2003, Issue 2, Art No CD003373. DOI: 10.1002/14651858.CD003373
2. Saslow D., Hannan J, Osuch J, Alciati M., Clinical breast examination: practical recommendations for optimizing performance and reporting; CA Cancer J Clin 2004; 54:327-344 doi: 10.3322/canjclin.54.6.327; <http://CAonline.AmCancerSoc.org/cgi/content/full/54/6/327>
3. Mittra I., Baum M., Thornton H., Is clinical breast examination an acceptable alternative to mammographic screening?, British Medical Journal 2000; 321:1071-1073
4. Freund K M. Rationale and Technique of Clinical Breast examination. MedGenMed 2(4), 2000.; <http://www.medscape.com/viewarticle/408932>
5. Barton MB, Harris R, Fletcher SW. Does this patient have breast cancer? The screening clinical breast examination: Should it be done? How? JAMA 1999; 282: 1270-1280
6. McDonald S, Saslow D, Alciati MH. Performance and Reporting of clinical breast examination: A review of the literature.CA Cancer J Clin 2004; 54:345-36
7. Krainer M, Silva-Arrieta S, FitzGerald MG, et al. Differential contributions of BRCA1 and BRCA2 to early-onset breast cancer. N Engl J Med. 1997;336:1416-1421.
8. Baines CJ. Physical examination of the breasts in screening for breast cancer. J Gerontol. 1992;47:63-67.
9. Kerlikowske K, Grady D, Barclay J, Sickles EA, Ernster VL. Effect of age, breast density and family history on the sensitivity of first screening mammography. JAMA. 1996;276:33-38.

Կ.Է. Աղամյան

Վաղաժամ ծննդաբերություն

Ապացուցողական բժշկության նոր մոտեցումները (Համակարգված վերլուծությունների հիման վրա)

ԱՄՆ ԱՉԳ ՆՕՎԱ Ծրագիր

Վերլուծության նպատակը. Անփոփել վաղաժամ ծննդաբերության պատճառագիտության (էթիոլոգիայի), ախտածնության (պաթոգենեզի), ախտորոշման և վարման վերաբերյալ ապացուցողական բժշկության վերջին նորությունները:

Վերլուծության նյութն ու մեթոդաբանությունը. Քոքրեյնի տվյալների բազայից ընտրվել են թեմային վերաբերող մեկ տասնյակից ավելի վերլուծություններ՝ միայն վիճակագրորեն հավաստի արդյունքներով վերլուծական հոդվածներ:

Վերլուծության արդյունքները. Որքան կարծ է արգանդի պարանոցը և որքան փոքր է հղիության ժամկետը պարանոցի կարծացումը հայտնաբերելու պահին, այնքան մեծ է վաղաժամ ծննդաբերության (ՎԾ) հավանականությունը: Հղիության 22 շաբաթից հետո պարանոցահեշտոցային արտազատուկում ֆետալ ֆիբրոնեկտինի 50 մգ/մլ գերազանցող մակարդակը զուգակցվում է ինքնաբեր վաղաժամ ծննդաբերությունների մեծացած ռիսկի հետ: Ներկայումս չկան ապացույցներ փաստելու, որ անկողնային ռեժիմը կարող է նվազեցնել վաղաժամ ծննդաբերությունների հավանականությունը: Թե հեշտոցային, թե միջնականային պրոգեստերոնի կիրառումը կարող է նվազեցնել վաղ ինքնաբեր վաղաժամ ծննդաբերությունների (ՎԻՎԾ) հաճախականությունը և բարելավել նորածնային արդյունքները կարծացած արգանդի վզիկ ունեցող կանանց մոտ: Սպառնացող ԻՎԾ ժամանակ բետամինետիկների կիրառման արդյունավետությունը ապացուցված չէ: Կորտիկոստերոիդների կրկնվող դեղաչափերը նորածնային կյանքի առաջին շաբաթների ընթացքում նվազեցնում են առողջական լուրջ խնդիրների հաճախականությունը ու սրությունը: Ներկայումս չկան հստակ ապացույցներ ցերվիկալ շուրջկարի (սերկլյաժ) արդյունավետության վերաբերյալ, և մեթոդի հետազոտ կիրառման հարցն անորոշ է:

Եզրակացություն. ՎԾ ախտորոշելու նպատակով պետք է լայնորեն կիրառել հեշտոցային սոնոգրաֆիան և ֆետալ ֆիբրոնեկտինի թեստը: ՎԾ վարման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ապացուցված արդյունավետություն ունեցող մեթոդներն ու դեղերը և հրաժարվել կասկածելի արդյունավետությամբ միջոցներից:

Հիմնական բառեր. սպառնացող ինքնաբեր վաղաժամ ծննդաբերություն (ՍԻՎԾ), ֆետալ ֆիբրոնեկտինի թեստ (ՖՖԹ), արգանդի պարանոցի երկարություն (ԱՊԵ), հեշտոցային գերծայնային հետազոտություն (ՀԶՀ):

Վաղաժամ են համարվում հղիության մինչև 37 շաբաթը տեղի ունեցած ծննդաբերությունները: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն, վաղաժամ ծննդաբերությունները կարող են լինել ինքնաբեր (50%) կամ պտղաջրերի վաղաժամ արտահոսքից հետո (30%): Մնացած 20%-ը լինում է տարբեր պատճառներից, ինչպիսիք են՝ պրենէկլամպսիան, պտղի ներարգանդային աճի դանդաղումը, ինչպես նաև բժշկական միջամտությունների հետևանք կամ յաթրոգեն: Ամբողջ աշխարհում՝ թե գարգացած և թե գարգացող երկրներում, նկատվում է վաղաժամ ծննդաբերությունների թվի զգալի աճ: Վերջին 25 տարվա ընթացքում ԱՄՆ-ում այն կազմել է միջինը 35%՝ 2005-ին 12,7% 1981-ին 9,4%: Այսպիսով՝ ԱՄՆ-ում ամեն 8-րդ երեխան վաղաժամ ծնունդ է [1]:

Առողջապահական ծախսերի առումով վաղաժամ ծննդաբերությունները լրացուցիչ բեռ են պետական բյուջեի վրա: Օրինակ՝ ԱՄՆ-ում ամիսս նորածնի վրա հիվանդանոցային 13 օրվա ընթացքում միջինը ծախսվում է 51000 դոլար: Պերինատալ մահացության կառուցվածքում վաղաժամ ծնվածները կազմում են 75%: Ժամկետային նորածնների համեմատ վաղաժամ ծնվածների շրջանում հիվանդացության մակարդակը նույնպես զգալի բարձր է: Առողջական խնդիրները, ինչպես՝ շնչառական դիսթրես համախտանիշը, աղեստամոքսային, իմունաբանական և կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների հավանականությունը

մինչև 31-րդ շաբաթը ծնվածների մոտ 16 անգամ բարձր է ժամանակին ծնվածների համեմատ [2]:

Վաղաժամ ծննդաբերությանը նպաստող ռիսկի գործոններից են՝ անամնեզում վաղաժամ ծննդաբերությունը, բազմապտուղ հղիությունը, պարանոցային անբավարարությունը, արգանդի զարգացման արատները, հղիությունից առաջ և ընթացքում թերսնվածությունը, 17-ից ցածր և 35-ից բարձր տարիքը, անբավարար կենցաղային պայմանները, ստրեսը հղիության ընթացքում, դեղերի չարաշահումը, ծխելը, սակավարյունությունը և այլ: Այդուհանդերձ, ռիսկի գործոնների առկայությունը որոշիչ չէ՝ վաղաժամ ծննդաբերած կանանց ավելի քան կեսը չունի ռիսկի որևէ գործոն [2]:

Համարվում է, որ գոյություն ունի վաղաժամ ծննդաբերությանը նպաստող չորս հիմնական մեխանիզմ: Առաջին՝ ստրեսի ազդեցության տակ մայր-պտղային հիպոթալամուս-հիպոֆիզ-մակերիկաններ առանցքի վաղաժամ ակտիվացում է: Երկրորդ՝ խորիո-դեցիդուալ մակերեսի կամ համակարգային (պիելոնեֆրիտ, թոքաբորբ) առկա վարակներն ու բորբոքումն է: Երրորդ՝ դեցիդուալ արյունահոսություններն են՝ շերտազատման կամ ենթախորիոնիկ հեմատոմաների առաջացման պատճառով: Եվ վերջապես չորրորդ՝ արգանդի ախտաբանական ձգվածության, արգանդի զարգացման արատի, բազմապտուղ հղիության կամ գերջրության հետևանք է [2]:

Վաղաժամ ծննդաբերության ռիսկը գնահատելու համար ներկայումս կիրառում են ինչպես քիմիական թեստեր՝ ֆետալ ֆիբրոնեկտին, այնպես էլ կենսաֆիզիկական՝ արգանդի պարանոցի երկարության գնահատում հեշտոցային գերծայնային հետազոտությամբ (ՀԶՀ): Վաղաժամ ծննդաբերությունների կանխատեսման գործում արգանդի պարանոցի երկարության նշանակությունն առաջին անգամ նկարագրվել է Ջ.Յամսի իրականացրած հետազոտությամբ՝ 1996թ. հրատարակված «Պարանոցի երկարությունը և ինքնաբեր վաղաժամ ծննդաբերության ռիսկը» վերլուծական հոդվածում: Համաձայն այդ հետազոտության արդյունքների՝ արգանդի պարանոցի երկարության նվազումը մեծացնում է մինչև 35 շաբաթական վաղաժամ ծննդաբերությունների հավանականությունը: Առավել ճշգրիտ են ՀԶՀ հղիության 14-ից մինչև 34-րդ շաբաթը կատարված կանխատեսումները: Որքան կարծ է պարանոցը և որքան փոքր է հղիության ժամկետը պարանոցի կարծացումը հայտնաբերելու պահին, այնքան մեծ է ՎԾ հավանականությունը: Այս կախվածությունը ճիշտ է բոլոր հղիների համար անկախ ռիսկի գործոնների առկայությունից՝ ինչպես միապտուղ, այնպես էլ բազմապտուղ հղիությունների պարագայում: Այնուամենայնիվ, այս թեստի զգայունությունն ու սպեցիֆիկությունը տատանվում է հղիության տարբեր ժամկետներում՝ կախված տվյալ ազգաբնակչության շրջանում ՎԾ հաճախականությունից, միապտուղ և բազմապտուղ հղիությունից և այլն:


Պարանոցի երկարության ՀԶՀ գնահատումը և

ներգնման գնահատականը, ըստ Բիշոփի, ցույց են տվել համանման արդյունքներ: Այսպիսով, պետք չէ թերագնահատել ներգնման կարևորությունը և հարկ է հիշել, որ ՀԶՀ իրականացնելու համար, բացի համապատասխան սարքի առկայությունից, պահանջվում է նաև համապատասխան հմտություն: Նույն հիվանդի պարանոցի երկարությունը գնահատելիս կարող են ստացվել տարբեր արդյունքներ՝ կախված տվիչի (դատչիկի) տեղակայումից և պարանոցի վրա գործադրած ուժից [3]:

Ֆետալ ֆիբրոնեկտինը ՎԾ ռիսկի գնահատման կարևոր բիոքիմիական մարկեր է: Այն առաջին անգամ 1991 թվականին նկարագրել է Լոքվուդը «Պարանոցային և հեշտոցային արտազատուկների ֆետալ ֆիբրոնեկտինը (ՖՖ), որպես վաղաժամ ծննդաբերության նախանշան» հոդվածում: Ֆետալ ֆիբրոնեկտինն ադիեզիվ գլիկոպրոտեին է, որի առկայությունը պարանոցային արտազատուկում վկայում է ՎԾ ռիսկի մասին: Այն արտադրվում է ամնիոցիտներում ու տրոֆոբլաստի բջիջներում և կուտակվում է տրոֆոբլաստի ու դեցիդուայի արանքում: Ֆետալ ֆիբրոնեկտինը սոսնձի դեր է կատարում արգանդի և հղիության միջև:

Հղիության առաջին եռամսյակում ֆետալ ֆիբրոնեկտինը բավականին մեծ խտությամբ առկա է պարանոցային լորձում, իսկ դրա ցուցանիշները տատանվում են լայն սահմաններում, ինչը զգալի նվազեցնում է այս թեստի կիրառությունը հղիության վաղ շրջանում: Նորմալ ընթացող հղիության ժամանակ այս գլիկոպրոտեինը տեղակայված է

Վաղաժամ ծննդաբերության (ՎԾ) հավանականության կախվածությունը պարանոցի երկարությունից



լինում խորհունի և դեցիդուայի միջև, և 22 շաբաթից հետո պարանոցային լորձում կամ հեշտոցային արտազատուկի մեջ հայտնաբերվում է շատ ցածր խտությամբ (<50 նգ/մլ): Նշված ժամկետից հետո պարանոցահեշտոցային արտազատուկում ֆետալ ֆիբրոնեկտինի 50 նգ/մլ գերազանցող մակարդակը զուգակցվում է ինքնաբեր վաղաժամ ծննդաբերությունների մեծացած ռիսկի հետ: Ներկայումս առաջարկվում է ֆետալ ֆիբրոնեկտինի խտությունը որոշել հղիության 22-ից մինչև 35-րդ շաբաթը: Ստորև ներկայացված պատկերից պարզ է դառնում, թե ինչու հենց նշված ժամանակահատվածում, քանի որ այդ ժամկետում նորմալ ընթացող հղիության պայմաններում ֆետալ ֆիբրոնեկտինի խտությունը կայուն է և չի գերազանցում 50 նգ/մլ [4]:

Կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացնելուց առաջ ստորև նշված են ՖՖԹ-ի վերաբերյալ որոշ վիճակագրական եզրույթներ՝ բացասական կանխատեսման արժեք, դրական կանխատեսման արժեք, զգայունություն և սպեցիֆիկություն:

**Բացասական կանխատեսման արժեքը (ԲԿԱ)** պատասխանում է հետևյալ հարցին. «Եթե կնոջ թեստը բացասական է ((-)ՖՖԹ), որքա՞ն է հավանականությունը, որ նա չի ծննդաբերի վաղաժամ»:

**Դրական կանխատեսման արժեքը (ԴԿԱ)** պատասխանում է հետևյալ հարցին. «Եթե կնոջ թեստը դրական է ((+)ՖՖԹ), որքա՞ն է հավանականությունը, որ նա կծննդաբերի վաղաժամ»:


**Զգայունությունը** ցույց է տալիս դրական ՖՖԹ ունեցող վաղաժամ ծննդաբերած հղիների տոկոսը:

**Սպեցիֆիկությունը** ցույց է տալիս բացասական ՖՖԹ ունեցող վաղաժամ ծննդաբերած հղիների տոկոսը:

Մի բազմաբնույթ հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են վաղաժամ ծննդաբերությունների կանխատեսման արժեքները, զգայունությունը և սպեցիֆիկությունը՝ ավտանշաններ ունեցող և ԻՎԾ առումով բարձր ռիսկի խմբի հղիների շրջանում: Բացասական ՖՖԹ ունեցող հղիներից միայն 15%-ն է ծննդաբերել վաղաժամ, այսինքն՝ թեստի սպեցիֆիկությունը կազմել է 85%, որի շնորհիվ հնարավոր է եղել խուսափել անհիմաստ հոսպիտալացումից և միջամտություններից, այդ թվում տոկոլիտիկների և ստերոիդների կիրառումից, ու նվազեցնել մայրական սթրեսը: ԻՎԾ ավտանշաններ ունեցող կանանց ԴԿԱ-ն եղել է 44%: Ստացված տվյալները նպաստել են անհրաժեշտ բուժօգնությանը՝ նվազեցնելով նորածինների մոտ շնչառական դիսթրես համախտանիշի առաջացման հավանականությունը: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում բացահայտվել է ֆետալ ֆիբրոնեկտինի թեստի բարձր բացասական կանխատեսման արժեքն ու սպեցիֆիկությունը ինքնաբեր վաղաժամ ծննդաբերությունները կանխորոշելու գործում [5]:


Ֆետալ ֆիբրոնեկտինի թեստի (ՖՖԹ) և ինքնաբեր վաղաժամ ծննդաբերության մյուս նախանշանների հավաստիությունը համեմատելու նպատակով իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ:

Ֆետալ ֆիբրոնեկտինի խտությունը պարանոցահեշտոցային արտազատուկում



Աղբյուրը՝ Garite TJ et al. Contemp Obstet Gynecol. 1996;41:77-93.

Ինքնաբեր վաղաժամ ծննդաբերության ռիսկը (%) կախված տարբեր գործոններից



Աղբյուրը՝ Goldenberg RL et al. Am J Public health. 1998;88:233-238

Դրանցից մեկը կատարվել է 1992-1994թթ. Գուդենբերգի (Ալաբամայի համալսարանի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոն, ԱՄՆ) գլխավորած խմբի կողմից: Համեմատվել են հետևյալ ռիսկի գործոնները՝ արգանդի պարանոցի երկարությունը (ԱՊԵ) = 25 մմ, նախորդ հղիության ինքնաբեր վաղաժամ ծննդաբերությունը (ՆՅԻՎԾ) և ֆետալ ֆիբրոնեկտինի դրական թեստը ((+)ՖՖԹ): Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ռիսկի գործոններից ամենավատահեղին ֆետալ ֆիբրոնեկտինի դրական թեստն է, որն առանձին ունի մոտ քսան տոկոս ռիսկային հավանականություն, իսկ մյուս գործոնների հետ զուգակցվելուց ռիսկի տոկոսն աճում է մի քանի անգամ [6]:

**Սպառնացող ինքնաբեր վաղաժամ ծննդաբերության (ՍԻՎԾ) և ԻՎԾ առումով բարձր ռիսկի հղիների վարումը**

Ստորև ներկայացնում ենք ՍԻՎԾ-ի վարման ժամանակ կիրառվող որոշ միջամտությունների նկատմամբ ապացուցողական բժշկության մոտեցումները: Դրանք են՝ անկողնային ռեժիմը և կենսակերպի փոփոխությունը, պրոգեստերոնի, տոկոլիտիկների, կորտիկոստերոիդների կիրառումը և արգանդի վզիկի շուրջկարը (սերկլյաժը):

Վաղուց ի վեր **անկողնային ռեժիմը** վաղաժամ ծննդաբերությունը կանխելու նպատակով լայնորեն կիրառվող գործառնություն է: Քանի որ ծանր ֆիզիկական աշխատանքը զուգակցվում է ԻՎԾ-ի բարձր մակարդակի հետ, ապա երկար տարիներ իշխել է

այն կարծիքը, որ անկողնային ռեժիմով կարելի նվազեցնել դրանց հավանականությունը: Այս ենթադրության ճշմարտացիությունը պարզելու նպատակով մի խումբ ուսումնասիրողներ վերլուծել են Քոքրեյնի տվյալների բազայում եղած նմանատիպ հետազոտությունները: Դրանցից մեկում ԻՎԾ առումով բարձր ռիսկի 1266 հղիից 432-ին նշանակվել է անկողնային ռեժիմ, մնացած 834-ից 412-ը ստացել են պլացեբո, իսկ 422-ին ոչ մի նշանակում չի արվել: Վաղաժամ ծննդաբերությունների հաճախականությունը երկու խմբում էլ համեմատելի է եղել (7,9% անկողնային ռեժիմի պայմաններում, ստուգիչ խմբի 8,5%-ի դիմաց, հարաբերական ռիսկը (RR)՝ 0,92. 95% հավաստիության միջակայք (CI)՝ 0,62-ից 1,37): Այսպիսով, ներկայումս չկան ապացույցներ փաստելու, որ անկողնային ռեժիմը կարող է նվազեցնել վաղաժամ ծննդաբերությունների հավանականությունը [7]:

Հեշտոցային գերծայնային հետազոտությամբ հաստատված կարճացած արգանդի պարանոցով բարձր ռիսկի հղիների մոտ վաղ ԻՎԾ-ի վտանգը նվազեցնելու նպատակով հեշտոցային ճանապարհով ներմուծված պրոգեստերոնի արդյունավետությունը պարզելու համար մի խումբ գիտնականներ իրականացրել են բազմաբնույթ, պատահականության սկզբունքով և պլացեբոյով ստուգվող մի հետազոտություն: Դրա առաջնային արդյունքը մինչև 32 շաբաթ վաղաժամ ծննդաբերություններն էին: Ընտրել էին հղիության երկրորդ եռամսյակում (ԱՊԵ <28մմ) 620 հղիի, որոնցից 313-ը ստացել էին 90մգ հեշտոցային պրոգեստերոն, իսկ 307-ը՝ պլացեբո:



Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ կարճացած ԱՊԵ <28 մ օրվա ընթացքում հղիներից պրոգնոստիկ ստացած խմբում վաղաժամ ծննդաբերությունների (≤32 շաբաթ) ցուցանիշը նշանակալի ցածր է (0% ստուգիչ խմբի 29,6%-ի դիմաց, P=0,014): Նույն պատկերն էր նաև երկրորդային արդյունքները վերլուծելիս՝ նորածնների ավելի քիչ ուղեգրումներ վերակենդանացման բաժանմունքներ (15,8% և 51,9%, P=0,016) և շնչառական դիսթրես համախտանիշի ավելի ցածր մակարդակ պրոգնոստիկ ստացած հղիների խմբում (5,3% և 29,6%, P=0,06): Այսպիսով՝ հեշտոցային պրոգնոստիկ կիրառումը կարող է նվազեցնել ԻՎԾ հաճախականությունը և բարելավել նորածնային արդյունքները հաստատված կարճացած ԱՊԵ ունեցող կանանց մոտ [8]: Համադրելի արդյունքներ էին ստացվել նաև պրոգնոստիկ միջնկանային ներարկման դեպքում [9]:

ՄԻՎԾ ժամանակ վաղաժամ ծննդաբերությունը կանխելու կամ հետաձգելու նպատակով բավականին լայնորեն կիրառվում են բետա-միմետիկները (տերբուտալին, ռիտոդրին, գինեպրալ, պարտուսիստեն): ՄԻՎԾ-ի ժամանակ նշված դեղամիջոցի կիրառման արդյունավետությունը գնահատելու համար մի խումբ հետազոտողներ վերլուծել են Քոքրեյնի տվյալների բազայում առկա բեմալին առնչվող ուսումնասիրությունները: Վերլուծության մեջ, ուր ընդգրկվել է 11 պատահական վերահսկվող հետազոտություն (ՊՎՀ կամ RCT), համեմատվել է բետա-միմետիկների և պլացենտայի արդյունավետությունը:

Արդյունքում, եզրակացության մեջ նշվել է, որ վաղաժամ ծննդաբերությունների հաճախականության տեսակետից բետա-միմետիկների ու պլացենտայի արդյունավետությունը համեմատելիս որևէ նշանակալի տարբերություն չի հայտնաբերվել (RR 1,08, 95% CI 0,88-ից 1,32): Որևէ տարբերություն չի գրանցվել նաև պերինատալ մահացության և նորածնային հիվանդացության առումով: Դրա փոխարեն բետա-միմետիկների խմբում առավել հաճախ են հանդիպել կողմնակի ազդեցությունները՝ դողի և հաճախասրտության տեսքով: Այսպիսով՝ ՄԻՎԾ ժամանակ բետա-միմետիկների կիրառման արդյունավետությունը ապացույցներ չունի [10]:


Կորտիկոստերոիդների ներարկումը վաղաժամ ծննդաբերությունների ժամանակ բավականին լուսաբանված թեմա է և գրեթե համատարած կիրա-

ռում ունի: Այդ իսկ պատճառով Քոքրեյնի տվյալների բազայից կներկայացնենք դրան վերաբերող ուսումնասիրությունների վերլուծության արդյունքները: Հետազոտություններում, ընդհանուր առմամբ, ներգրավված է եղել 2000-ից ավելի կին հղիության 23-ից 33 շաբաթական ժամկետում: Կորտիկոստերոիդների կրկնվող դեղաչափերի ներարկումը զուգակցվել է ինչպես շնչառական խնդիրների (RR 0,82, 95% CI 0,72-ից 0,93), այնպես էլ ընդհանուր նորածնային ծանր հիվանդացության հաճախականության նվազեցման հետ (RR 0,79, 95% CI 0,67-ից 0,93): Այսպիսով՝ կորտիկոստերոիդների կրկնվող դեղաչափերի կիրառումը նվազեցնում է առողջական լուրջ խնդիրների հաճախականությունն ու սրությունը նորածնային կյանքի առաջին շաբաթների ընթացքում [11]:

Արգանդի վզիկի շուրջկարը (սերկլաժը) վաղուց կիրառվում է պարանոցային անբավարարության պատճառով առաջացած վաղաժամ ծննդաբերությունները կանխելու նպատակով, լինում է կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) (նախքան պարանոցի բացումը) և անհապաղ (երբ պարանոցը սկսել է կարճանալ ու բացվել): Նպատակ ունենալով գնահատել այդ միջամտության իրական արդյունավետությունը՝ մի խումբ գիտնականներ վերլուծել են Քոքրեյնի հղիության և ծննդաբերության խմբի հատուկ ռեգիստրում (ոսնակ, բաժին) առկա վեց հետազոտություն արգանդի վզիկի շուրջկարի վերաբերյալ: Չորսում համեմատվել են կանխարգելիչ շուրջկարի և միջամտության չենթարկված հղիությունների ելքերը:


Արձանագրվել է մինչև 33 շաբաթական հղիության ժամկետում ԻՎԾ մակարդակի մի փոքր նվազում (RR 0,75, 95% CI 0,58- 0,98), սակայն, ընդհանուր առմամբ, ԻՎԾ-ի վիճակագրորեն հավաստի նվազում չի դիտարկվել: Նմանատիպ տվյալներ են ստացվել նաև մյուս երկու հետազոտության վերլուծության արդյունքում, որոնցում գնահատվել էր անհապաղ շուրջկարի արդյունավետությունը՝ անկախ պարանոցի հարթվածության աստիճանից: Այսպիսով՝ ներկայումս չկան հստակ ապացույցներ ցերվիկալ շուրջկարի արդյունավետության վերաբերյալ, և մեթոդի հետագա կիրառման հարցն անորոշ է [12]:

ՖՖԹ արդյունքների հիման վրա իրականացվող միջոցառումների ալգորիթմներ



Աղբյուր (աղապատցված է)՝ Roman Ashley S., Rebarber Andrei. Preterm Birth and Fetal Fibronectin - Assessing Risk along the Continuum (Interactive presentation, 2007).

**Ֆետալ ֆիբրոնեկտինի թեստի իրականացման տեխնիկան**



Քսուկը վերցրեք նախքան պարանոցի հետ որևէ գործողության իրականացումը՝

- Երգնում
- ՀՀՀ
- Պապ-թեստ կամ այլ քսուկ

Թեստը չի կարող իրականացվել, եթե առկա է՝

- պարանոցի բացում  $\geq 3$  սմ
- պտղաջրերի վաղաժամ արտահոսք
- որևէ նյութ հեշտոցում (գել, օճառ)
- պարանոցի շուրջկար (սերկլաժ)
- արյունային արտադրություն կամ
- ունեցել է սեռական հարաբերություն
- վերջին 24 ժամվա ընթացքում:

Վերջին երկու պայմանը չապահովելու դեպքում բավականին մեծ է կեղծ դրական պատասխանի հավանականությունը:

Աղբյուր (աղապատված է)՝ Roman Ashley S., Rebarber Andrei. Preterm Birth and Fetal Fibronectin - Assessing Risk along the Continuum (Interactive presentation, 2007).

Քսուկը վերցնելու համար անհրաժեշտ է տեղադրել հեշտոցային հայելիներ և հետին կամար մտցված ձողիկով խնուծ (տամպոնը) 10 վայրկյան պատեցնել պարանոցահեշտոցային արտազատուկը հավաքելու համար: Ձողիկով խնուծ (տամպոնը) պետք է հեռացնել հեշտոցից և բամբակյա ծայրն ընկղմել սրվակով հեղուկի մեջ: Ձողիկի՝ սրվակի երկարությունը գերազանցող մասն անհրաժեշտ է կտրել սրվակի եզրին ու ամուր փակել կափարիչով հեղուկի արտահոսքը կանխելու և ապահով տեղափոխելու համար: Թեստի իրականացումը պահանջում է համապատասխան սարքավորում և մոտավորապես 30 րոպե ժամանակ [2]:

Վաղաժամ ծննդաբերությունները շարունակում են մնալ առողջապահական շատ լուրջ խնդիր: Լավ արդյունք ստանալու համար անհրաժեշտ է արագ ախտորոշել ԿՎ և համապատասխանաբար վարել: Որպես ԻՎԾ նախանշան, ֆետալ ֆիբրոնեկտինը գերազանցում է բոլոր առկա կլինիկական և անամնեստիկ ռիսկի գործոնները: Հեշտոցային ուլտրաձայնային հետազոտության կիրառումը ՖՖԹ-ի հետ կարող է էլ ավելի մեծացնել կանխատեսման հավաստիությունը:

Ֆետալ ֆիբրոնեկտինի բացասական թեստը կօգնի խուսափել չհիմնավորված հոսպիտալացումից և կնվազեցնի հղիի հուզական լարվածությունը, իսկ դրական թեստը կհիմնավորի նպատակային միջամտությունները: Դրանց շարքում են ԻՎԾ կանխելու գործում ապացուցված բարձր արդյունավետություն ունեցող հեշտոցային կամ միջմկանային ճանապարհով կիրառվող պրոգեստերոնը և նորածնային շնչառական դիսթրեսի հավանականությունը նվազեցնող կորտիկոստերոիդները: Փոխարենը՝ գործածումից դուրս են գալիս հետազոտությունների արդյունքում վիճակագրորեն հավաստի արդյունավետություն չունեցող նախկինում կիրառվող մի շարք միջամտություններ և դեղեր: Այսպիսով՝ անհրաժեշտ է օգտագործել ապացուցված արդյունավետություն ունեցող մեթոդներն ու դեղերը և հրաժարվել կասկածելի արդյունավետություն ունեցող միջոցներից:

**Գրականություն**

1. Berghella V, Hayes E, Visintine J, Baxter j. Fetal fibronectin testing for reducing the risk of preterm birth. (Protocol) Cochrane Database of Systematic Reviews 2007, Issue 4. Art. No.: CD006843. DOI: 10.1002/14651858. CD006843.
2. Roman Ashley S., Rebarber Andrei. Preterm Birth and Fetal Fibronectin - Assessing Risk along the Continuum (Interactive presentation, 2007).
3. Jay D. Iams, Robert L. Goldenberg, Paul J. Meis. The Length of thr Cervix and the Risk of Spontaneous Premature Delivery. NEJM, Volume 334: 567-573, February 29, 1996, Number 9.
4. CJ Lockwood, AE Senyei, MR Dische. Fetal fibronectin in cervical and vaginal secretions as a predictor of preterm delivery.

5. Roman Ashley S.; Koklanaris Nikki; Paidas Michael J. Blind vaginal fetal fibronectin as a predictor of spontaneous preterm delivery. Obstetrics and gynecology 2005, vol. 105, no2, pp. 285-289.
6. R L Goldenberg, J D Iams, B M Mercer. The preterm prediction study: the value of new vs standard risk factors in predicting early and all spontaneous preterm births. American Journal of Public Health. 1998 February; 88(2): 233-238.
7. Sosa C, Althabe F, Belizճn J, Bergel E. Bed rest in singleton pregnancies for preventing preterm birth. Cochrane Database of Systematic Reviews 2004, Issue 1. Art. No.: CD003581. DOI: 10.1002/14651858.CD003581.pub2.
8. E. A. DeFranco, J. M. O'Brien, C. D. Adair. Vaginal progesterone is associated with a decrease in risk for early preterm birth and improved neonatal outcome in women with a short cervix. Ultrasound Obstet Gynecol 2007; 30: 697 - 705.

9. Dodd JM, Flenady V, Cincotta R, Crowther CA. Prenatal administration of progesterone for preventing preterm birth. Cochrane Database of Systematic Reviews 2006, Issue 1. Art. No.: CD004947. DOI: 10.1002/14651858.CD004947.pub2.
10. Dodd JM, Crowther CA, Dare MR, Middleton P. Oral betamimetics for maintenance therapy after threatened preterm labour. Cochrane Database of Systematic Reviews 2006, Issue 1. Art. No.: CD003927. DOI: 10.1002/14651858.CD003927.pub2.
11. Crowther CA, Harding JE. Repeat doses of prenatal corticosteroids for women at risk of preterm birth for preventing neonatal respiratory disease. Cochrane Database of Systematic Reviews 2007, Issue 3. Art. No.: CD003935. DOI: 10.1002/14651858.CD003935.pub2.
12. Drakeley AJ, Roberts D, Alfirevic Z. Cervical stitch (cerclage) for preventing pregnancy loss in women. Cochrane Database of Systematic Reviews 2003, Issue 1. Art. No.: CD003253. DOI: 10.1002/14651858.CD003253.

